

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՊՍԱԿՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐ ՄԸ*

Վարձկան զինուորականը որ գաւառ-
ներուն մէջ մեծագոյն մասը կը կազմէր
լեզուններուն՝ ուրիշ բանի չէր սպասեր:
Մինչև հոս՝ դատաստանարանին պահա-
պան զինուորները ներկայ եղած էին՝ ան-
շարժ և լոկն՝ այն խորհրդաւոր գաղու-
թային բանավէճին, որմէ բան մը միայն
կը հասկնային, թէ իրենց պետը (Պի-
դատոս) նշանաւոր չէր հանդիսացած անոր
մէջ, փէջ մ'առնեն գուարճացած էին տես-
նելով դժնէհայեաց ղէմքերը, աղտոնողի
խօսքերն ու շարժումներն այն հրէական
խաժամութիւն և ընդնմարած՝ որ Գործա-
կալը շփոթած և տխրած՝ կը ճաղպատէր,
կը ծնծկուէր ու չէր գիտեր ինչպէս մէջն
ելլել առաւօտեան այն խառնակութեան:
Կը նայէին անոր՝ ինչպէս կը նային շուններն
անճարակ որսորդին, որ վեր վար կը
պտտի որանց գորշուով տալուն և կրակե-
լու, թէև որանց հեռու չլլայ:

Արդ վերջապէս բան մը կ'ըլլուէր, ի-
րենց համար ալ կը սկսէր զրօսանքը:
Հրեաներուն իսկ ատելի Հրէի մը գաւակը
գաւազանելը խաղ մըն էր անվտանգ և
առանց շատ յոգնութեան: Այնչափ որ
ձեռքերին քիչ մը պիտի տաքնար, և
առաւօտեանց ցուրտէն կծկուած իրենց
նեարդերը պիտի ձգտէին և իրենք ալ քիչ
մը պիտի շարժէին:

Ամբողջ գունդը ապարանքին գաւիթը
կանչելով՝ վերցուցին Յիսուսի վրայէն
Անտիպասի ընծայած ձերմակ զգեստը —

ձեռնարկին առաջին կողոպուտն է — յե-
տոյ միւս զգեստները: Սպասաւորները քա-
կեցին գաւազանները, զորս ապշուպցին
պինտ կարշնեղները: Վարժ մարդիկ էին
և գիտէին ձաղկել գեղեցիկ՝ կաշմորուն
թափով և արուեստի կանոնով:

Յիսուս՝ կիսամերկ՝ ցիցի մը կապուած,
որպէս զի չժոյր և չնուագեցնէ հարուած,
ներուն ուժը, զինքը ձաղկելէն քրտնոգ
զինուորներուն համար կ'աղաչէ Հօր՝ լոկի
ու մնջիկ, Չրասմ միթէ. Սիրեցէք զանոնք՝
որ ձեզ կ'ատեն. բարի ըրէք անոնց՝ որ
ձեզ կը հալածեն, դարձուցէք ձախ ծնօտ-
նիդ անոր՝ որ աջը կը հարուածէ: Ան չի
կրնար այն վայրկեանին վարձատրել զինքը
ձաղկողները՝ եթէ ոչ բարեխօսելով Աս-
տուծոյ որ ներէ իրենց: Անոնք ալ՝ ինչ-
պէս ինքը՝ գերինքն են և հնազանդ, և
չեն գիտեր թէ ո՛վ է այն՝ զոր կը ձաղկեն
այնքան անմեղ ցնծութեամբ. իրենք իսկ
երբեմն ձաղկուեցան պակասած ըլլալուն
համար և եզակի բան մը չեն գտնիր որ
Գործակալը, Գլուխը, Հոռոմայեցի մը այն-
պէս պատժել տայ հպատակ և ստորին
ցեղէ ապիրատ մը:

Ուժով զարկէր, լեզունականներ: Այդ
արիւն որ կը սկսի հոսիլ պատառուածը-
ներէն՝ կը հոսի ձեզի՛ ալ համար: Առաջին
արիւնն է զոր մարդիկ կ'առնեն Մարդուն
Որդիէն: Ընթրիքին մէջ իր արիւնը գինիի
երեւոյթն ունէր, Ձիթենեաց լերան վրայ
արիւնը որ կը կաթէր քրտնքրին հետ
խառն՝ կը բղխէր բոլորովին հոգեկան և
ներքին զարչարանքէ մը: Իսայ ախօր
մարդու ձեռքեր են որ կը բղխեցնեն ար-
իւնը՝ Քրիստոսի երակներէն. զինուոր-
ներու կոշկոռոտուն ձեռքեր ի սպաս հօր-
ներու և հարուստներու. ձեռքեր ձաղկող-
ներու՝ որոնք պիտի գամեն գամերն ալ:

* Սոյն երկու զուգիւնները մաս կը կազմեն Յովնանէս
Պապիի «Պատմութիւն Քրիստոսի» հոյակապ զրքին,
որուն յաջորդական նորանշան երեւոյթ մըն է քանի-
րորդ դարու իտալական մատենագրութեան մէջ, փէջ ժա-
մանակ մէջ սպակեցան 100,000 օրինակներ և զրեթէ
ամէն լեզուներով թարգմանեցաւ: Բազմաթիւ մարդ-
կաթիւնը մեծ սփոփանք մը գտաւ հոն՝ կարգաւոր Աս-

տուածորդայն պատմութիւնը՝ զրուած հրեան անկրօն և
մարդակաւ հօր զրէջ մը, որ գտած էր հուսկ իր միւ-
թարութիւնը Քրիստոսութեան սրբանուէր վարդապետու-
թեանը մէջ: Գիրքը կը բաղկանայ 600-է աւելի էջերէ, որ
թարգմանուած է ամբողջովին, և որմէ կը հրատարակենք
սոյն երկու զուգիւնները՝ Չարաբանաց այս ամսուն մէջ,
Խ.

Այն թիկունքը կապուտակ՝ ուռած՝ արիւն-
հրանգ՝ պատրաստ է փայտին կցուելու.
մորթը այնպէս պատուտած՝ քեղդողւած՝
պիտի խաշի անոր հոգին ցաւէն, երբ տա-
րածեն զայն անարդէ և անհարթ խաչին
վրայ: Արդ կրնաք դադրեցնել, վատշուէր
օտարականին գաւիթն ալ թրջած է արիւ-
նով: Գոնապանը՝ այսօր իսկ՝ պիտի լուայ
այն արատները, բայց անոնք պիտի վե-
րածաղկին նոյն իսկ լուացումէն վերջ՝
Պոնտոսի Պիղատոսի ճերմակ ձեռքերուն
վրայ:

Հրամայուած հարուածները մատակա-
րարուած են կանոնով, բայց լեզէոնա-
կաններն արդ որ համը առին՝ չեն ուզեր
փութով փախցնել ձեռքէ իրենց զօրը:
Մինչև հոս կատարեցին պատուիրուած
հրաման մը, արդ կ'ուզեն զոհացնել իրենց
քմահաճոյքը: Ասի՝ հրապարակին վրայ
ոռնացողներուն ըսածին համմատ՝ կ'ըսէ
թէ թագաւոր է: Գոհացնենք զինքը՝ յի-
մարը, և այսպէս կատողեցնենք նաև զա-
նոնք՝ որ չեն ուզեր ճանչնալ իր թագա-
ւորական մեծվայելչութիւնը:

Ձկնուոր մը կը հանէ իր ծիրանի վե-
րարկուն — լեզէոնականներու քրքմադոյն
ըղամիդը — և զայն կը նետէ արիւնով
կարմիր ուսերուն վրայ. կը նշմարէ ուրիշ
մը խուրճ մը չոր փուշերու՝ որ հոն դը-
րուած են վառելու համար երեկոյին պա-
հապան գունդին ակութք. անկէ զոյգ մը
կը հիւսէ պսակի ձեւով և անով կ'ար-
տախուրէ զլուխը. երրորդ մը գերիէ մը
եղէգ մը կ'առնէ և զայն բռնի անոր աջ
ձեռքին մատներուն մէջ կը խօթէ, և
ապա քըքջալիւր ծաղրածութեամբ կը հրեն
զինքը նստարանի մը վրայ: Եւ մի առ
մի առջևէն անցնելով, ծուրը կը դնեն
անհանձնեթիթօրէն և կը գոչեն:

— Բարեւ, Հրէից թագաւորիդ:

Բայց ամէնքը չեն գոհանար այն ծաղ-
րական մեծարանքով: Մէկը ապտակ մըն
է կ'իջեցնէ այն այտին վրայ՝ ուր դեռ
կեցած է կայիափայի ծառային մատուը-
ներուն ստուերը. ուրիշներ աշուրներուն
վրայ կը թընեն. մէկը՝ աւելի սրամիտ՝

կ'առնէ ձեռքէն եղէգը և անով կ'իջեցնէ
գլխուն, այնպէս որ պսակին փուշերը
աւելի խորը մխուելով՝ ճակատին շուրջը
նարօտ մը կը կազմեն մարգարիտներու՝
կարմիր ըղամիդին նման:

Եւ դեռ ուրիշ հաճոյալի գիտեի պիտի
մտածէին անշուշտ եթէ գործակալը՝
զուարթ ժխորէն քաշուած՝ հրաման տուած
չըլլար որ ձաղկուած թագաւորը դուրս
բերեն:

Լեզէոնականները գուշակած էին այն
ծիծաղաշարժ ծպտումով՝ Պիղատոսի աշ-
պանալից մտադրութիւնը: Ան ժպտեցաւ,
և Յիսուսի ձեռքէն բռնելով տարաւ զայն
դատաստանարանին քարայատակին վրայ,
և ցուցնելով զայն դիզուած անասուննե-
րուն՝ աղաղակեց.

— Ահա Մարդը:

ՁԵՌՔԵՐՈՒՆ ԼՈՒԱՅՈՒՄԸ

— Ահա Մարդը:

Եւ դարձնելով Յիսուսի ուսերը դէպ ի
ոռնացող խուժանը՝ որպէս զի տեսնեն
զաւազաններուն կապուտոցուցած տեղերն
ու արիւնուշտ գունաւորումները:

— Նայեցէք, ձեր թագաւորը, միակ
թագաւորը որուն արժանի էք, իր իսկա-
կան վեհափառութեան մէջ, յարգարուած
գաղղարուած ինչպէս որ կը վայլէ: Պսակը՝
խայթող փուշերէ է. իր ծիրանի վերար-
կուն՝ վարձկանի մը ըղամիդն է. գաւա-
զանը չոր եղէգ մըն է, կտրուած ձեր
վտիտ փոսերէն մէկէն: Արժանաւոր զար-
դեր բարեկենդանի այս թագաւորին, զոր
անիրաւութեամբ չ'ուզեր ճանչնալ ձեզի
պէս անարգ ժողովուրդ մը: Մարմն էիր
իր արիւնին: Ահա իր արիւնը. տեսէք
ինչպէս գնդացիք է խարազաններուն վէր-
քերուն շուրջը, և ինչպէս կը կաթկթէ
պսակին փուշերէն: Քիչ է, բայց պէտք
է բաւէ, վասն զի այս արիւնը անմեղ է,
և արդէն մեծ շնորհ մըն է որ ես վազցնել
տուի զայն՝ ձեզ գոհացնելու համար: Եւ
արդ կորսուեցէք ասկէ, վասն զի զիս
խլացուցիք բաւական:

Բայց Հրեաները չորոգուեցան ոչ այն խօսքերէն և ոչ ալ այն տեսքէն: Այդ ձաղկումէն և այդ դիմակաւորումէն տարբեր բան պէտք էր որ անոնք մեկնէին խաղաղութեամբ: Պիղատոս կը կարծէր ծաղրել զիրենք, բայց պիտի տեսներ փութով որ կատակի ժամանակ չէր: Երկու անգամ գլուխը ճաթեցուցած էր անոնց ընդդիմարանելով ու դեռ պիտի ճաթեցնէր: Դանի մը կապուտակ նշաններ և զինուորական կատակախաղ մը չէին բաւեր յիւրաքի իբր արժանաւոր պատիժ Աստուծոյ թշնամիին: Կան դեռ ծառեր Հրէաստանի մէջ և զամերձ զայն հոն փակցնելու համար: Եւ խաղաղախուղաւ խապտա խղուրդ տիւնները խուժանին կը խոնջեն միաբեւրան:

— Թող խաչուի՛. թող խաչուի՛:

Պիղատոս կը նշմարէ՝ շատ ուշ՝ որ խրած է այնպիսի անել լաբիրինթոսի մը մէջ՝ ուրկէ պիտի չկարենայ ելլել: Բոլոր իր որոշումներուն դէմ կը դժոխեն այնպիսի կամշոտ յամառութեամբ մը՝ զոր չզիտցան նախատեսել: Մտքի վերջին լոյս մը թելադրեց իրեն մեծ խօսքերը:

— Ահա Մարդը:

Բայց ինքն իսկ չի գիտեր ամբողջ իմաստն այն յայտարարութեան՝ որ գերի վերոյ կը թռչի իր հոգեւոյն ստորնութիւններէն: Չէ նշմարած փնտռած ճշմարտութիւնը գտած ըլլալը: Կէս ճշմարտութիւն մը, բայց աւելի խորունկ քան այն բոլոր՝ զոր կրնային սորվեցուցած ըլլալ իրեն Հոռմի և Յունաստանի փիլիսոփաները: Պիտի չլընար ըսել թէ ինչու Յիսուս ճշմարտապէս մարդն է, խորհրդանշանը ցաւագին և կորակոր համօրէն մարդկութեան, մատնուած իր պետերէն, խաբուած իր վարդապետներէն, խաչուած ամէն օր թագաւորներէն որ կը լափեն հպատակները, հարուստներէն որ կը լափեն աղքատները, քահանաներէն որ աւելի իրենց փորը կը մտածեն քան Աստուած: Յիսուս Յաւորու մարդն է՝ ծանուցումը Եսայիէն, մարդ անարգ տեսքով, զոր ամենքը կը մերժեն և պիտի սպաննուի ամենուն համար:

մար. է՝ վերջապէս միակ Աստուծոյ միակ որդին, որ մարդու կերպարանք առաւ և վերստին պիտի իջնէ օր մը իշխանութեան և նոր արեւուն փառքովը, յարուցիչ փոշեբու ոքոտումին միջև: Բայց այսօր Պիղատոսի աչքերուն, աչքերուն Պիղատոսի թշնամիներուն՝ ուրիշ բան չէ եթէ ոչ եղկելի մարդ մը, ոչինչ մարդ մը, միս՝ զաւազաններու և զամերու համար, մարդ մը և ոչ Մարդը, մահկանացու մը և ոչ Աստուած մը: Ինչ բանի կը սպասէ Պիղատոս՝ իր սիրելիլայական խօսքերով՝ դահիճին ձեռքը տալու համար զանիկա:

Եւ սակայն Պիղատոս դեռ տեղիք չի տար: Այս լուակացին քով հոռմայեցին կը զգայ խուժումն իր մէջ հարստահարիչ պակուցումի մը, որուն փորձն երբեք չէ առած: Ո՛վ է ուրեմն ասի՝ զոր ամբողջ ժողովուրդը մը կ'ուզէ որ մենի, և ինք չի յաջողիր ազատել զայն և ոչ ալ զոհել: Անգամ մըն ալ կը դառնայ Յիսուսին:

— Ըսէ ինձի ուրեմն, ուսկից ես:

Բայց Յիսուս չի պատասխաներ:

— Չե՞ս խօսիւ հետս: չե՞ս գիտեր որ իշխանութիւն ունիմ քեզ ազատելու և իշխանութիւն՝ քեզ խաչ հանելու:

Այն ատեն իայտառակուած թագաւորը կը բարձրացնէ գլուխը:

— Վրաս ոչ մէկ իշխանութիւն պիտի չունենայիր՝ եթէ տրուած չըլլար քեզի վերէն. որուն համար ան որ զիս քեզի մատնեց՝ քենէ աւելի յանցաւոր է:

Միայն կայիափան ու իր ընկերներն են որուն յանցաւորները: միւսները զրգոռած շունք և հնազանդ գործիքներ են: Պիղատոս ալ ըմբոստ մէկ գործիքն է քահանայական ատելութեան և Աստուծոյ կամքին:

Բայց գործակալը՝ որ իւր մոլորանքին մէջ չի գտներ ոչ մէկ նոր հնարք զինք խեղդող հանգոյցը խզելու՝ առաջին սեւեռումին կը դառնայ:

— Ահաւա՛հ քեզ թագաւորը:

Հրեաները՝ թունաւորուած կրկնուած նախատիւրքն՝ վեր կը ցատկեն մուգնութեն:

Եթէ՛ աստիկա ազատեան՝ կայսիր բարեկամ չեաւ՝ Ով որ ինքզինքը թագաւոր կը հռչակէ՛՝ հակառակ է կայսեր։

Գտած էին վերջապէս բուն զգալուն կէտը՝ խոցելու համար փոքրոգիին՝ Հրոճովէական ամէն դատաւորի բախտը՝ որքան ալ բարձրադիր ըլլար՝ կը կախուէր այն ժամանակ կայսեր պաշտպանութիւնէն։ Այդ տեսակի ամբաստանութիւն մը — ներկայացուած ճարտարութեամբ նենգաւոր փաստարաններէ — և չէին պակսեր Հրէից մէջ, ինչպէս պիտի տեսնէ աւելի ուշ կարդալով փրկոնի յիշատակարանը — կրնար կորսնցնել զայն։ Բայց ի հենուկս սպառնալիքին՝ Պիղատոս կը զոչէ վերջին և աւելի անմիտ հարցումը։

— Ե՛ս ի՞նչ պիտի հանեմ ձեր թագաւորը։

Փահանայապետները՝ կռահելով որ ահա յաղթելու վրայ են՝ կը պատասխանեն վերջին սուտով։

— Մենք կայսրէն զատ ուրիշ թագաւոր չունինք։

Եւ ժողովուրդը իր պետերուն սուտին՝ անկեղծ աղաղակով։

— Մահ ատոր։ Մահ, ի՞նչը հան է ատիկա։

Պիղատոս անձնատուր կ'ըլլայ։ Վախէն թէ մի՛ գուցէ աղմուկ մը յարուցանէ որ կրնայ կրակել ամբողջ Հրէաստանը՝ կարևոր է որ տեղիք տայ։ Իր խղճմտանքը իրեն հանդարտ կ'երևայ։ ամէն ճամբաները փորձած է ազատելու համար այս մարդը՝ որ չ'ուզեր ազատիլ։

Փորձեց ազատել զայն՝ դատաստանն յանձնելով Մինեսորիոնի անդամներուն՝ որոնք չեն կրնար մահ տալ։ փորձեց ազատել զայն՝ զրկելով Հերովդէսի։ փորձեց ազատել զայն՝ հաստատելով թէ անոր մէջ ու է յանցանք չէ գտած։ փորձեց ազատել զայն՝ առաջարկելով որ Բարաբբայի տեղ զանի արձակեն։ փորձեց ազատել զայն՝ ձողկել տալով, յուսալով որ այն անարգ պատուհասը պիտի բաւէր խղաղելու հոգիները։ փորձեց ազատել զայն՝ ջանալով զթուրքեան շարժում յարուցանել

այն կարծրացած սրտերուն մէջ։ Բայց իր բոլոր հնարքներն ի դերե ելան, և ան չի կրնար ուզել որ այս անտանելի մարդուն գործին համար ամբողջ զաւաւր ոտք ելլէ, և մանաւանդ չ'ուզեր որ ասոր պատճառաւ ամբաստանեն զինքը Տիրերիոսի և պաշտօնանկ ըլլայ։

Պիղատոս ինքզինքն անմեղ կը կարծէ այս անմեղին արիւնէն։ Եւ որպէս զի ամէնքն ունենան տեսանելի և յիշելի գաղափար մ'այս անմեղութեան, կոնքով ջուր բերել կու տայ։ կը լուայ ձեռքն ամենուն առջև, բռնով։

— Անմեղ եմ ես այս արդարին արիւնէն։ դուք մտածեցէք։

Ինչ ամբողջ ժողովուրդը պատասխանեց։

— Ատոր արիւնը թող ինչայ մեր և մեր որդիներուն վրայ։

Այն ատեն հրամայեց որ արձակեն Բարաբբան և արգաւոր յանձնեց զինուորեն։ րուն որ խաչեն։

Բայց ջուրը որ թափուեցաւ իր ձեռքերուն վրայ՝ չի բաւեր զանոնք լուալու։ Իր ձեռքերը մինչև այս օրս արիւնոտւտ են մնացած և պիտի կարմրին յաւիտեան։ Այն ունէր իշխանութիւն ազատելու այն մարդը՝ բայց չուզեց։ Իր փախուստները, սկեպտականութեան հեզմանքն թուաւորուած իր հոգիին վատութեան բազմակերպի ձեւերը՝ մեղքին Յիսուսը դէպ ի կառափնատեղին։ Եթէ զանի յիրաւի յանցաւոր կարծած ըլլար և հաւանած սպանութեանը՝ նուազ անարգ եղած պիտի ըլլար։ Բայց ան զիտէ թէ Յիսուսի մէջ յանցանք չկայ, թէ Յիսուս՝ ինչպէս ըսաւ իրեն կողմից Պրոկուլա և ինչպէս ինքը կրկնեց՝ Արդար մըն է։ Հօգը մը՝ որ ինք իրեն չարիք ընելու երկիւղէ՛ն՝ արդար մը սպաննել կու տայ, ինքը որ զրկուած է պաշտպանելու արդարները մարդասպաններու դէմ, արժանի չէ չքմեղանքի։ Բայց ես ըրի, կ'ըսէ Պիղատոս, ամէն բան կրեցածիս չափ՝ անարդարներու ձեռքէն ջուր թելու համար զանի։ Ծճարիտ չէ։ Շատ ճամբաներ փորձեց, բայց չընտրեց միակը՝ որ նպատակին պիտի տանէր։ Չնուիրեց

ինքզինքը, չգոհեց ինքզինքը, չուզեց վերանայել իր պատիւն ու իր բախտը: Հրեաները կ'ատեն Յիսուսը, բայց նոյնչափ կ'ատեն Պիղատոսն ալ, որ այնչափ կերպերով նեղած է զիրենք եւ ծաղրած: փոխանակ Յիսուսի տեղ խռովայոյզ Բարաբբան առաջարկելու, պէտք էր առաջարկել ինքզինքը, Պոնտիոս Պիղատոս, Գործակալ Հրեաստանի, և ժողովուրդը գուցէ ընդունէր փոխանակութիւնը: Ոչ մէկ գոհ իրմէ զատ՝ պիտի կրնար ամոքել Հրեից կատաղութիւնը: Հարկ չէր մեռնիլ. կը բաւէր ձայնաւորու ըլլալ անոնց՝ որ զինքը կաթաբեր ամբաստանեն՝ իրր թշնամի կայսեր: Տիրերիոս զինքը պիտի վտարէր իր տեղէն, քաջորէր, բայց քաջորի եւ թշնամութեան մէջ հետը պիտի տանէր ան. մեղութեան սփոփանքը: Այնչափ աւելի որ այս բախտը՝ որ արդ զինքը կը համոզէ նետել Յիսուսը թշնամիներուն ձեռքը իրր հաշտարար զո՞ւ պիտի վիճակուի իրեն ճիշ տարիներու մէջ, Հրեաներն ու Սամարացիք զինքը պիտի ամբաստանեն: Ասորիցի կուսակալը զինքը պաշտօնանկ պիտի ընէ և Կալիֆուլա զայն պիտի Գաղղիա քաջորէ, Բայց քաջորին մէջ պիտի հետևի իրեն իր հաւանութեամբն սպանուած մեծ Լուկացին ստուերը: Ի զուր շինել տուաւ Երուսաղէմի մէջ ջրային գեղեցիկ ջրամբար, ի զուր լուացուցաւ ժողովուրդին առջև այն ջուրով: Այն ջուրը հրեական ջուր է, ջուր պղտոր և անիծեալ, ջուր՝ որ չի մաքրել: Ոչ մէկ լուացում պիտի կրնայ մաքրել իր ձեռքերը արատ. ներքէն՝ զորս հոն թողուց Քրիստոսի աստուծային արիւնը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻՆԻ

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻՅԵԱՆ

Հայաստանին օգնելը՝ քաղաքակրթութեան օգնել է:

ԿԱՍՍԹԸՆ

ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎՍԷՓ ԱՐԹԵՆ ՊԵՅՅ ԶՐԱՔԵԱՆ

Հնագիւրք կը գտնուի Կափուիէն փետրուար 12ին ագնուաշուք Յովսէփ Արթին Պէշի մահը. բազմադիւն գերդաստանէ կը շինանէր անգամ մը. Կրտսեր եղբայր կը նա Եսաղուս Արթին փաշայի, ծնած յԱրեւմտահայաստան 1844ին, և միասին յամառած Պոլսոյ Միխիթրեան և ապա Փարիզոյ Մուրատեան վարձարանները, որով երախտագիտութեամբ կը յիշէր միշտ իր անկուրթեան զատախարակները, չնայելու անոնց ամառն ամառն և Կոթոր-Տամ-Սթոյլ փոխադրուած գաղղիական լեզուի և գրականութեան մէջ զարգանալու համար, իր զօր՝ Արթին Պէշի անհաղթելի մահուամբ կը ստիպուէր Եղիզուսի փոխարքային Սայիա փաշայի թէլադուրեանքով:



հօրեղբորը՝ Խոսրով Պէշի հրաւերով Գանձիւքի փոխարքունի կը դառնայ հետ 1861ին, շարունակելու համար հոն ուսումը, և աւելի եւ հմտանալու թուրք, արաբ և պարսիկ լեզուներուն: Դոր հարուած մը սակայն իրենց իր կործանամբ 1863ին՝ կը բռնադատուի որ ծրկու երթանաւորը. ներք ընդհատան ուսումին, և Պոլսոյ ու Եւրոպայ մամբ, բողոքելով թէթիւնքին իրենց զգացած ցարը: 1863ին Յովսէփ Արթին Պէշի աղջնկ նշանակուած էր Խամայիլ փաշայի արքունական պաշտօնակներուն կործան, մինչ կը դառնար Եսաղուս՝ Եւրոպայի մէջ իր զարգացումը կը կատարելաւ զորքէր, զատախարակ կարգուելու համար ապա Խոփուի և Մուսաթափ փաշայի որդիներուն Բայջ Յովսէփ Արթին Պէշի խառնուածքը արքունիքի պաշտօններով չէր կրնար զսպուիլ. նա իր անկարի ազատութիւնը գերադաս համարելով՝ Հնդկաստանի մէջ ընդարձակ հողերու վրայ լեզուի մշակութեան մէջ ուզեց փորձել բախտը, որ Եղիզուսի մէջ իրեն չէր ժպտաւ:

Եւրոյ ճատորդ զար մը իր լծակցին աշակցութեամբ միայն զօրացած՝ երբ բաւական հարստութեամբ մը կը տակաւոր թողուր Հնդկաստանը՝ վրան տիրապետելու ուզող անդիկի պատճառաւ, իրմէ խնամուած և նոյն իսկ քրիստոնէական աւագանին արժանացած բնիկներ արքունիքով կը հետեւին երկար ժամանակ, խիստ գանձելով այսպիսի բարեփոխ տիրութեմ մը անշնամուրիւ: Մարազանիքի զգացումը և զթաւ սիրտը նա ամենաբոկեց հետը կը տանէր: Մահուան ամօրե Կափուիէի Լեւ Տօքս Թերթը (16 փետ. 1923) շնտեսաւ սողերով կը դրուատըր հանգիստեալ Պէշը. «Կարտախեց անկամեմատ քարեկամ մը, եւ ընկերութիւնը կը կորսցնէ Արթին Պէշով դատ ամենայնի պատուաւոր մարդը, Կա յիշու մահունքաց երեկոյ ապա պարգոյնեամբ՝ որ այսքաւ, խնամուած ամենամեծ գործովն իր սիկ. Թերթեա ամուսնեն, Կա մեծ բարեբար մը եղաւ, եւ անհամար են ողորմութեան գործերը զորս ինքը կատարեց»:

Եւ իրօք, Միտրանութիւն ալ իր բարեբարներու շարքին մէջ կը դասէ Արթին Պէշը. Կարեկցելով նա բազմաթիւ լեռալ սորերուն՝ ուզեց ընդ միշտ որդեգրել անմեղէ մէկ քանին Մուրատ Ռաֆայելեան վարձարանէ մէջ, ապաւովելով անոնց տարեկան եկամուտ մը: Այսցնելով Միտրանութեան ժառանգարանը և անուսնելով որ իր իրերի կը դառնայ վստի, Եսաղուս փաշայի նուիրած զբոքերը ասանքին զարաններու մէջ ամփոփուեալ: